Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ՝ ԱՐՏԱՍԱՆՎԱԾ ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅՈՒՄ ՀՐԱՎԻՐՎԱԾ «21-ՐԴ ԴԱՐԸ՝ ԱՌԱՆՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ» ԳԻՏԱԺՈՂՈՎՈՒՄ

(18 ապրիլ 2000 թ.)

Մեծարգո Նախագահ ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիայի.

Համայն հայության հոգևոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից երախտագետ սրտով և հոգու անհուն մխիթարությամբ Հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում Հայոց Մեծ եղեռնի 85-րդ տարելիցին նվիրված «21-րդ դարը՝ առանց ցեղասպանությունների» գիտաժողովի պատվարժան մասնակիցներին և հյուրերին: Գոհություն և փառք ենք մատուցում Բարձրյալին, որ դարասկզբին մահվան դատապարտված ժողովուրդն հայոց այսօր, դարավերջին, ազատ և անկախ հայրենի հողի վրա, Գիտությունների Ազգային Ակադեմիայում գիտաժողով է հրավիրում՝ մեկ անգամ ևս գնահատական տալու մարդկության պատմության մեծագույն եղեռնագործություններից մեկին և հարգանքի տուրք մատուցելու հազարավոր անմեղ զոհերի սուրբ հիշատակին: Այո՛, հայ ժողովրդի համար աղետով սկսված 20-րդ դարն ավարտվում է հայոց անկախության ու ազգային պետականության իրողությամբ, Արցախի ազատագրական պայքարի շնչով, ի սփյուռս աշխարհի հայոց համազգային կյանքի միության ոգով ու կամքով:

Պատվարժան մասնակիցներ գիտաժողովի, սիրելի հայորդիք.

Շուրջ հարյուրամյա հեռավորությունից այսօր առավել տեսանելի են դարասկզբի ողբերգական իրադարձություններն ու դրանց հետևանքները: Գերմարդկային ջանքերով հայ ժողովուրդը վերապրեց մահասփյուռ եղեռնը, սակայն իր վշտի մեջ տևական մի շրջան միայնակ մնաց՝ անարդարության, վիրավորանքի վերքը և հալածանքների ու մահվան հետապնդող ստվերը հոգում:

Ժամանակին առանձին անհատներ միայն՝ Հենրի Մորգենթաու, Յոհաննես Լեփսիուս, Արմին Վեգներ... արձագանքեցին և բողոքի ու վրդովմունքի իրենց ազնիվ ձայնը բարձրացրին՝ մեղադրելով Արևմտյան Հայաստանում և Օսմանյան Թուրքիայի հայաշատ վայրերում 1915 թ. և դրանից առաջ ու հետո կազմակերպված հայկական սահմռկեցնող ջարդերի հեղինակներին: Փա՛ռք Բարձրյալին, այսօր հայկական կոտորածների՝ 1915 թ. հայոց ցեղասպանության իրողությունը ճանաչում են պետություններ, խորհրդարաններ, բյուրավոր առաքինի անձինք, թեև տակավին չի հաղթանակել Հայոց Մեծ եղեռնը դատապարտող մարդկային արդարությունը:

Ավարտին է մոտենում երկու աշխարհամարտ տեսած, մեծ տեղաշարժերի, մեծ նվաճումների, մարդու և ազգերի անբռնադատելի իրավունքների ամրագրման դարը: Ասպծո և մարդկության առջև մեծագույն այդ ոճրի համընդհանուր դատապարտումը անհրաժեշտ է բոլոր ժողովուրդներին, համայն մարդկությանը: Բռնության և անօրինության համատեղ մերժումով, արդարության ճանաչումով միայն մարդկությունը կդրսևորի իր աներեր կամքը՝ նոր հազարամյակ մուտք գործել, հաստատելով երաշխիքները ժողովուրդների խաղաղ համակեցության, փոխադարձ վստահության ու գործակցության:

Մեր հոգեբուխ աղոթքն է, սիրելիներ, որ Ամենակարող Տերը զորացնի մարդկության բարի կամեցողության արարող ոգին, արդարության, խաղաղության ձրգտումը և աջակից լինի Բարին կերտելու մարդկային ջանքերին, որպեսզի նոր՝ երրորդ հազարամյակը աշխարհին բացվի հաշտության, բարօրության, երջանկության հույսով ու հավատով: Մեր աղոթքն է նաև, որ Հայաստանի Գիտությունների Ազգային Ակադեմիայում հրավիրված այս գիտաժողովը հաջող և բարի ընթացք ունենա, արգասավոր ներդրում բերի ժողովուրդների փոխհասկացողության, բարեկամության ու համագործակցության վսեմ նպատակին, որպեսզի մուտք գործենք նոր հազարամյակ գիտաժողովի նշանաբանով՝

«21-րդ դարը՝ առանց ցեղասպանությունների»:

Բյուր օրհնություն հայոց Մեծ եղեռնի անմեղ զոհերի հիշատակին:

«Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ ձեզ ամենեսեան». ամեն: